



ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ, 2017թ.

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ և ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ և ԵՎՐԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՐ  
21-րդ ԹՈՂԱՐԿՈՒՄ

**ՀԱՅԱՍՏԱՆ**, ՍԵՊՏԵՄԲԵՐ 2018



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE




**fhi360**  
THE SCIENCE OF IMPROVING LIVES



# ՀԱՅԱՍՏԱՆ

Մայրաքաղաք. Երևան  
 Բնակչություն. 3,045,191  
 Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (PPP). \$9,500  
 Մարդկային զարգացման ինդեքս. Բարձր (743)  
 Ազատության աստիճանը. Մասնակի ազատ (45/100)

## 2017թ. ՔՀԿ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ՝ 3.7



Հայաստանի անցումը կառավարման կիսանախագահական համակարգից խորհրդարանականին շարունակվեց մինչև 2017 թվականը: 2015 թ. վերջին հաստատված նոր սահմանադրության համաձայն՝ ապրիլին ընտրվեց նոր խորհրդարան, որտեղ ձայների մեծամասնություն ստացավ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը: Կարեն Կարապետյանը մնաց վարչապետ, իսկ կառավարությունը՝ հիմնականում անփոփոխ էր: Հունիսին խորհրդարանը հավանություն տվեց կառավարության 2017-2022 թթ. ծրագրին, որը միտված էր իրականացնելու լայնածավալ սոցիալ-տնտեսական բարեփոխումներ: Նույն ամսին խորհրդարանն ընդունեց հակակոռուպցիոն միջոցառումների վերաբերյալ օրենսդրական փաթեթ, որը ներառում էր «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքը և «Ազդարարման համակարգի մասին» օրենքը: Փոփոխություն կատարվեց նաև «Հանրային ծառայության մասին» օրենքում:

Նոյեմբերին ստորագրվեց Եվրամիություն (ԵՄ)-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (CEPA)՝ անվտանգության հարցերում համագործակցության ամրապնդման, ներդրումային միջավայրի բարելավման, համայնքային և բիզնեսի զարգացման վերաբերյալ: Համաձայնագրի իրականացումը մշտադիտարկելու համար կստեղծվի քաղաքացիական հասարակության անկախ պլատֆորմ՝ բաղկացած հայկական և ԵՄ կազմակերպությունների ներկայացուցիչներից:


ՔՀԿ-ի կայունությունը 2017թ. բարելավվել է մի շարք հարթություններում արձանագրված առաջընթացով: Ուժի մեջ է մտել «Հասարակական կազմակերպությունների մասին» նոր օրենքը, կատարվել են օրենսդրական այլ փոփոխություններ՝ ապահովելով ՔՀԿ-ների համար կարգավորման առավել նպաստավոր դաշտ: Կարողությունների զարգացման բազմաթիվ ծրագրերի շնորհիվ՝ ՔՀԿ-ները հետզհետե ավելի լավ են գիտակցում իրենց ինստիտուցիոնալ զարգացման կարիքները:

Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կայունության ինդեքսը 2017թ. համար

Դրանցից շատերը բարելավել են իրենց ներքին կառավարման և ռազմավարական պլանավորումը: Դրական միտումներ են նկատվել Ֆինանսական կենսունակության, շահերի պաշտպանության և ոլորտային ենթակառուցվածքների հարթություններում՝ պայմանավորված ֆինանսավորման դիվերսիֆիկացիայի ավելացմամբ, երկխոսության բարելավված ծրագրերով և վերապատրաստման նոր հնարավորություններով: Միննույն ժամանակ ՔՀԿ-ները դարձել են բացասական քարոզարշավների շարունակական առարկա՝ հաճախ այլ ՔՀԿ-ների կողմից մեղադրվելով դոնորների օրակարգին հետևելու և հայկական ավանդական արժեքները մերժելու մեջ:

ՀՀ Արդարադատության նախարարության (ՀՀ ԱՆ) տվյալներով՝ 2017թ. վերջի դրությամբ Հայաստանում գրանցվել են 4 782 հասարակական կազմակերպություններ, 1 119 հիմնադրամներ և 317 իրավաբանական անձերի միություններ: Այդ թվերը քիչ ավելի են, քան գրանցված է եղել 2016 թվականին: Փորձագետների գնահատմամբ՝ գրանցված կազմակերպությունների մոտ 20 տոկոսն է ակտիվ:

## ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅՐ՝ 3.7



ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Հիմնադրամների մասին» օրենքը: Այս նոր իրավական ակտերն ուժի մեջ են մտել 2017 թ. փետրվարին: «Հասարակական կազմակերպությունների մասին» նոր օրենքը ներկայացրել է մի շարք դրույթներ, որոնք կարող են դրականորեն ազդել հասարակական կազմակերպությունների գործունեության վրա, որոնք կազմում են գրանցված կազմակերպությունների մեծամասնությունը՝ ներգրավելով անմիջականորեն եկամտաբերող գործունեության հնարավորությունները և թույլատրելով ավելի մեծ ճկունություն նրանց անդամության և կառավարման կառույցների հարցերում: Բացի դրանից՝ բնապահպանական կազմակերպություններն իրենց հիմնադիրների շահերը շրջակա միջավայրի խնդիրների վերաբերյալ արդեն կարող են ներկայացնել դատարաններում, իսկ հանրային աղբյուրներից ֆինանսավորվող հասարակական կազմակերպություններին պարտավորեցնում են ներկայացնել տարեկան ֆինանսական հաշվետվություններ: Հասարակական կազմակերպությունները պարտավոր են

2017թ. քաղաքացիական հասարակության իրավական միջավայրը բարելավվեց, ինչը հիմնականում պայմանավորված էր ՔՀԿ նոր օրենսդրության կիրարկմամբ:

Հայաստանում գրանցված ՔՀԿ-ները կարգավորող հիմնական օրենքներն են՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքը, որն ընդունվել է 2016 թ. դեկտեմբերին, և նույն ամսին փոփոխված

վերանայել իրենց կանոնադրությունները, եթե դրանք չեն համապատասխանում օրենսդրության նոր պահանջներին: Նոր օրենսդրության համաձայն՝ նաև վերացվում է իրավաբանական անձերի միությունների հայեցակարգը, քանի որ հասարակական կազմակերպությունների անդամներ կարող են դառնալ նաև իրավաբանական անձինք: Այսպիսով՝ օրենքն ուժի մեջ մտնելուց սկսած՝ մեկ տարվա ընթացքում, իրավաբանական անձերի միությունները պետք է գրանցվեն որպես հասարակական կազմակերպություններ, թեև ավելի ուշ այդ ժամկետը երկարաձգվել է:

ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրը պատասխանատու է ՔՀԿ-ների գրանցման համար: Հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների գրանցման որոշումների վերաբերյալ օրենքը նախատեսում է համապատասխանաբար տասը և տասնհինգ օր ժամկետ: Այնուամենայնիվ, ՔՀԿ կանոնադրությունների մասով պետական ռեգիստրը հաճախ պահանջում է լրացուցիչ տեղեկատվություն կամ փոփոխություններ: ՀՀ Արդարադատության նախարարությունը 2017թ. մայիսին հասարակական կազմակերպությունների համար հաստատել է տիպային կանոնադրության նմուշ: Եթե կազմակերպությունն օգտագործում է տիպային կանոնադրությունը, կիրառվում է պարզեցված գրանցում, և հաճախ այն ավարտվում է երկու օրվա ընթացքում: Հայաստանում գործելու համար ՔՀԿ-ները պարտավոր չեն գրանցվել, եթե մտադիր չեն ունենալ ֆինանսական գործարքներ:

Նոր օրենսդրությամբ ՔՀԿ-ների վերահսկումը փոխանցվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին (ՊԵԿ), որտեղ ստեղծվել է հատուկ բաժին: Նախկինում ՀՀ ԱՆ-ն էր պատասխանատու ՔՀԿ-ների գործունեության իրավական համապատասխանության վերահսկման համար, իսկ ՊԵԿ-ը միայն պատասխանատու էր հարկային հարցերի համար: Մինչև 2017 թվականն այդ բաժինը դեռ չէր հաստատել գործառնական ընթացակարգերը, ինչն ակնկալիքների մասով որոշ անորոշություն է առաջացրել ՔՀԿ-ների շրջանում: Այնուամենայնիվ, ընթացակարգերի նախագծման գործում ՊԵԿ-ը պատրաստակամություն է հայտնել համագործակցելու ՔՀԿ-ների հետ և կազմակերպություններին հրավիրել է մասնակցելու ՊԵԿ-ի հասարակական խորհրդի աշխատանքներին:

Հասարակական կազմակերպությունների մասին օրենքը սահմանել է նաև կամավորների ներգրավվածության կարգը և կամավորներ ներգրավող հասարակական կազմակերպությունների կանոնները: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (ԱՍՀՆ) 2017 թվականին հանդես է եկել օրենսդրական առաջարկությամբ՝ ներկայացնելով կամավորության մասին օրենքի նախագիծ, որն առավել սահմանափակ պայմաններ է ապահովում կամավորներին հավաքագրելու և պայմանագրելու հարցում, քան «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքը, և կամավորներ ներգրավող հասարակական կազմակերպություններից պահանջում է լրացուցիչ հաշվետվություններ: Մի շարք ՔՀԿ-ներ քննադատել են

նախագիծը՝ չափազանց սահմանափակող և ծանրաբեռնված լինելու առումով: 2017 թվականի վերջին կառավարությունը դեռևս վերանայում էր այդ նախագիծը:

Թեև հասարակական կազմակերպությունները կարող են լուծարվել միայն դատարանի որոշմամբ, 2016 թվականի դեկտեմբերին ընդունվել է իրավական ակտ, որտեղ նշվում է, որ 2017 թվականի դեկտեմբերի 1-ից վերջին չորս տարիների ընթացքում հաշվետվություն չներկայացրած կազմակերպությունները կլուծարվեն, եթե մինչև 2017 թ. նոյեմբերի 1-ը նրանք չներկայացնեն որևէ առարկություն: 2017 թ. օգոստոսին Պետական ռեգիստրն իր կայքում հրապարակել է այն կազմակերպությունների ցանկը՝ ներառյալ ՔՀԿ-ները, որոնք չորս տարի շարունակ հաշվետվություն չեն ներկայացրել: Այնուամենայնիվ, շատ կազմակերպություններ տեղյակ չեն եղել այդ կարգավորման մասին՝ նրանք տեղեկացել են այն բանից հետո, երբ սկսվել է լուծարման գործընթացը, և կարիք են ունեցել բողոքարկելու այդ որոշումը: Այդ տարվա ընթացքում ՔՀԿ-ների նկատմամբ պետական հալածանքների դեպքեր չեն հրապարակվել:

<<Հասարակական կազմակերպությունների մասին>> նոր օրենքը նրանց թույլ է տալիս անմիջականորեն զբաղվել եկամուտ բերող գործունեությամբ: Հասարակական կազմակերպությունները կարող են նաև ստեղծել առևտրային ձեռնարկություններ կամ դառնալ դրանց բաժնետեր: Այնուամենայնիվ, երկու դեպքում էլ ստացված շահույթը պետք է օգտագործվի միայն հասարակական կազմակերպությունների կանոնադրություններում նշված նպատակներին համապատասխան: Բացի այդ՝ առևտրային գործունեության համար հասարակական կազմակերպությունները պետք է վարեն առանձին հաշվապահություն և հաշվետվություն: ՔՀԿ-ների բոլոր տեսակների համար թույլատրվում է նաև մասնակցել պետական գնումների մրցույթներին: Դրամահավաքային արշավները և դոնորական ֆինանսավորումը նույնպես համարվում են եկամտի թույլատրելի աղբյուրներ: «Հիմնադրամների մասին» օրենքի 2016 թ. փոփոխությունները հիմնադրամներին թույլ են տալիս ստանալ ֆինանսական նվիրատվություններ՝ որպես անձեռնամխելի կապիտալ, և այն օգտագործել որպես ֆինանսավորման աղբյուր:


ՔՀԿ-ներն ազատվում են դրամաշնորհների և նվիրատվությունների հարկերից: Այնուամենայնիվ, ստացված եկամուտից նրանք պետք է վճարեն շահութահարկ, ինչպես նաև 20% ԱԱՀ, եթե նրանց ընդհանուր տարեկան շրջանառությունը (սահմանված բոլոր տեսակի գործունեության տեսակների եկամուտը) գերազանցի 58.35 մլն դրամը (մոտ 121 հազար ԱՄՆ դոլար): Սա նրանց համար ստեղծում է անբարենպաստ իրավիճակ այն տնտեսվարող սուբյեկտների համեմատությամբ, որոնք կարող են ընտրել 5 տոկոս շրջանառության հարկ վճարելու տարբերակը, եթե նրանց շրջանառությունը 115 միլիոն դրամից ցածր է (մոտ 239 հազար դոլար): Սակայն նոր Հարկային Օրենսգրքի 2018 թվականից ուժի մեջ մտնելուց հետո բոլոր իրավաբանական անձինք 2019 թ. սկսած պետք է ունենան նույն՝ 58.35 մլն դրամի շեմը: ԱԱՀ-ից ազատվելու համար ՔՀԿ-ները կարող են դիմել պետական հումանիտար հանձնաժողովին այն նախագծերով գնումների համար, որոնք կառավարության կողմից համարվում են որպես բարեգործական: Կորպորա-

ցիաներն իրենց համախառն եկամուտները կարող են նվազեցնել՝ իրենց հարկվող եկամուտների մինչև 0.25 տոկոսը նվիրաբերելու դեպքում: Անհատական նվիրատվությունները հարկումից չեն ազատվում:

2017 թվականին Երևանում և մարզային քաղաքներում ՔՀԿ-ների իրավաբանական խորհրդատվությունը զգալիորեն բարելավվել է՝ մատչելիության առումով: Մի շարք կազմակերպություններ, այդ թվում՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ն, «ՀԿ կենտրոնը» (NGOC), «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ն և «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը (ԹԻՀԿ), Հայաստանի տարբեր շրջաններում իրականացրել են մի շարք իրազեկման հանդիպումներ, որոնցում փաստաբանները ներկայացրել են նոր փոփոխությունները և կազմակերպել հարցուպատասխան ենթադրող զրույցներ: ՔՀԿ-ները՝ որպես վերն ասվածի շարունակություն, շփվել են նաև ՊԵԿ-ի հետ՝ նոր դրույթների գործնական կիրառման հարցերը պարզելու նպատակով:

## ԿԱԶՄԱԿԵՐՊՈԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ 3.6

ՔՀԿ-ների կազմակերպական կարողությունները 2017թ.-ին բարելավվել են՝ հիմնականում դոնորական ֆինանսավորմամբ կարողությունների զարգացման ծրագրերի արդյունքում: ՔՀԿ-ները, որոնք մասնակցել են կարողությունների զարգացման ծրագրերին, բարելավել են իրենց ներքին կառավարումը և այժմ ավելի լավ են հասկանում իրենց զարգացման կարիքները, մասնավորապես՝ ներքին կանոնակարգերի և ռազմավարական կառավարման անհրաժեշտությունը: Օրինակ՝ NGOC-ն տեղեկացնում է, որ ըստ իրենց ծրագրում ընդգրկված վաթսույն ՔՀԿ-ների գնահատումների՝ նրանք բարելավել են իրենց կազմակերպական կարողությունները, քսան ՔՀԿ-ներ մշակել են ռազմավարական ծրագրեր:



ԿԱԶՄԱԿԵՐՊՈԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՔՀԿ-ների մեծ մասն ունի հստակ սահմանված առաքելություններ, և ավելի շատ կազմակերպություններ են սկսել կիրառել ռազմավարական պլանավորման մեթոդները իրենց որոշումների կայացման գործընթացներում: Նախորդ տարիների համեմատ աճել է այն ՔՀԿ-ների թիվը, որոնք ունեն գրավոր ներքին քաղաքականություն և ընթացակարգեր: Օրինակ՝ USAID-ի կողմից ֆինանսավորվող «ՀԿ ծառայություն մատուցող կազմակերպությունները հանուն քաղաքացիական հասարակության զարգացման» (ՕՄԿ ՔՀԶ) նախագծի շրջանակներում, որն իրականացվել է «ՀԿ կենտրոնի» և

«Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ի կողմից, «Համայնքների համախմբման և աջակցության կենտրոն»-ը և հայաստանյան յոթ այլ կազմակերպություններ մշակել են մի շարք ներքին ընթացակարգերը՝ կապված մարդկային ռեսուրսների կառավարման, արտաքին հարաբերությունների և ֆինանսական կայունության հետ: Այս ընթացակարգերը դրական ազդեցություն ունեցան կազմակերպությունների տեսանկյունից, հաղորդակցության, կառավարման և շահառուների հետ ներգրավվածության վրա:

ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «ՔՀ Կամուրջ» եռամյա ծրագիրը, որը մեկնարկել է 2016 թ. դեկտեմբերին՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) և Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) կողմից, իրականացրեց հայաստանյան ՔՀ-ների մասնագիտական կարիքների գնահատում՝ ավելի լավ հասկանալու մասնագիտական և ոլորտային հմտությունների առումով կարիքներն ու բացերը: Այդ գնահատման համաձայն՝ ՔՀ-ները հաճախ զբաղվում են մի քանի թեմատիկ բնագավառներում՝ ի տարբերություն փորձի մեկ ոլորտի, որը նրանց թույլ է տալիս ունենալ մասնագիտական հմտություններ՝ որոշակի ծառայությունների մատուցման համար:

ՔՀ-ները դեռևս առաջնահերթ չեն համարում իրենց աջակիցների բացահայտման և մոբիլիզացման ունակությունները, որոնք շարունակում են թույլ մնալ: ՔՀ-ները, որոնք անդրադառնում են խոցելի խմբերի կարիքներին կամ կոնկրետ ոլորտներում նրանց իրավունքների պաշտպանությանը, ավելի հաջողակ են իրենց գործունեությանն աջակցող խոշոր խմբերի ներգրավման գործում: Օրինակ՝ «Վարորդի ընկեր» ՀԿ-ն, որն անհիմն տուգանված վարորդների համար ապահովում է իրավական աջակցություն և դատական ներկայացուցչություն, իր ֆեյսբուքյան խմբում ավելի քան 30,000 անդամ է մոբիլիզացրել:

Թեև «Հիմնադրամների մասին» օրենքն արգելում է կառավարման խորհրդի անդամներին գործադիր մարմնում մասնակցելը, «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքը նման սահմանափակումներ չունի: Արդյունքում՝ շատ հասարակական կազմակերպություններ իրենց աշխատանքներում ներգրավում են իրենց կառավարման մարմինների անդամներին (եթե դրանք ունեն): ՔՀ-ներն ավելի շատ են հասկանում շահերի բախումից խուսափելու անհրաժեշտությունը, սակայն քիչ քանակի ՔՀ-ներ են ընդունում համապատասխան ընթացակարգեր կամ ձեռնարկում են համապատասխան քայլեր, քանի դեռ դրանք ակնհայտորեն չեն պահանջվել իրենց դոնորների կողմից: Փոքր ՔՀ-ները, մասնավորապես՝ սահմանափակ մարդկային ռեսուրսների պատճառով հաճախ հնարավորություն չունեն պատասխանատվության հստակ բաժանում կատարել իրենց խորհրդի, ղեկավարության և աշխատակիցների միջև:



ՔՀԿ-ների թափանցիկությունը դեռևս մնում է սահմանափակ: Գրանցված ՔՀԿ-ները սովորաբար հետևում են դոնորների կողմից ներկայացված հաշվետվության պահանջներին, սակայն մեծամասամբ ՔՀԿ-ներն անհրաժեշտ չեն համարում տեղական կամ միջազգային դոնորներից ստացված միջոցների օգտագործման մասին հաշվետվությունների հրապարակումը:

ՔՀԿ-ները հիմնականում հավաքագրում են վճարովի աշխատակիցներ, երբ առկա է ծրագրի ֆինանսավորում: Օրենքով ՔՀԿ-ները պետք է վճարովի աշխատողների հետ կնքեն պայմանագրեր: ՔՀԿ-ների համեմատաբար փոքր քանակը, հիմնականում նրանք, որոնք ստացել են կարողությունների զարգացման աջակցություն, ունեն աշխատատեղերի նկարագրություններ, աշխատավարձերի և անձնակազմի քաղաքականություն: Ֆինանսական գործարքների իրականացման համար ՔՀԿ-ներն ունենում են հաշվապահներ, կամ վարձում են արտաքին ծառայություններ, այլ մասնագետներ ներգրավվում են, երբ առկա է նախագծերի ֆինանսավորում:

Շատ ՔՀԿ-ներում, հատկապես ոչ ֆորմալ խմբերում, անդամները և կամավորները մարդկային հիմնական ռեսուրսներն են: Ըստ 2017 թ. «Բարեգործության համաշխարհային ցուցանիշի» Հայաստանը ներկայացնում է կամավորության՝ աշխարհում ամենացածր մակարդակը՝ ընդամենը 4 տոկոս մասնակցականությամբ: Սկսած 2017-ից ՔՀԿ-ները պետք է նաև պայմանագրեր կնքեն այն կամավորների հետ, որոնց զբաղվածությունն ավելին է շաբաթական քսան ժամից:

ՔՀԿ-ները սովորաբար ունենում են գրասենյակային հիմնական սարքավորումներ, ինչպիսիք են համակարգիչները, ծրագրերը, տպիչները և հեռախոսները, սակայն նրանք կարող են թույլ տալ իրենց սարքավորումների բարելավում և արդիականացում միայն դրամաշնորհային ֆինանսավորման առկայության դեպքում: Հետևաբար, շատերը շարունակում են օգտագործել հնացած ծրագրային ապահովում, համակարգչային և ցանցային սարքավորումներ: Համացանցը հասանելի է ողջ երկրում, չնայած կապի որակը տարբերվում է: Շատ գործող ՔՀԿ-ներ սոցիալական ցանցերում ունեն էջեր, մասնավորապես՝ Facebook-ում, այլ ցանցեր, ինչպիսիք են Twitter-ը, LinkedIn-ը կամ WhatsApp-ը, ՔՀԿ-ներում ավելի քիչ են ճանաչված:

---

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ՝ 5.0

2017 թ. որոշ չափով բարելավվել է ՔՀԿ-ների ֆինանսական կենսունակությունը՝ մեծածավալ և դիվերսիֆիկացված ֆինանսավորման հնարավորության, վաստակած եկամտի մասով օրենսդրական նոր դրույթների, ֆոնդահայթայթման օնլայն հարթակների օգտագործման աճի և պետական կառույցների համար գնումների գործընթացներին տիրապետելու շնորհիվ: Միևնույն ժամանակ, ՔՀԿ-ների տեղական ֆինանսավորման

աղբյուրները սահմանափակ են, և շատ ՔՀԿ-ներ դեռևս հենվում են կարճաժամկետ դրամաշնորհների վրա:



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՍՏԱՆՈՒՄ

ավանդական ՔՀԿ-ները հիմնականում ապավինում են օտարերկրյա նվիրատուների դրամաշնորհներին: Որոշ ՔՀԿ-ներ օգտվում են նաև հանրային դրամահավաքի և եկամուտ ստանալու հնարավորություններից:

ՔՀԿ-ներում զանգվածային դրամահավաքների (crowdfunding) օնլայն կայքերը հայկական սփյուռքի մեծ ծավալով նվիրատվությունների օգնությամբ գնալով ավելի հանրաճանաչ են դառնում: Ֆինանսական աջակցությունից բացի՝ հայկական սփյուռքը 2017 թվականից ակտիվացրել է անվճար մասնագիտական աջակցության տրամադրումը: Together4Armenia-ի, UNICEF-ի և ՀԲԸՄ-ի կողմից ղեկավարվող նորարարական վեբ-կայքը նպաստել է սփյուռքահայ փորձագետների և հայկական համայնքներում նախագծեր իրականացնող ՔՀԿ-ների միջև ցանցային կապի ստեղծմանը և գիտելիքների փոխանակմանը:

Բիզնեսները՝ որպես իրենց կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) ծրագրերի մաս, գործընկերային հարաբերությունների մեջ են մտնում ՔՀԿ-ների հետ: Սակայն դրանցից քչերն են ուղղակիորեն ֆինանսավորում ՔՀԿ-ներին: «Հայաստանի ծառատունկ» ծրագիրը (ATP) աշխատում է բիզնեսների հետ՝ նրանց օգնելով հասնել իրենց ԿՍՊ նպատակներին, մասնավորապես՝ ընկերությունների աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների մասնակցությամբ կազմակերպելով ծառատունկ: Վերջին տասներեք տարիների ընթացքում ATP-ն «Սինոփսիս Արմենիա» ընկերությունից տնկարկների և մաքրման աշխատանքների համար տարեկան միջինում ստացվել է 2 մլն դրամ նվիրատվություն (մոտ 4,200 ԱՄՆ դոլար): Բիզնեսներից միջոցներ ներգրավելով՝ ՔՀԿ-ները շարունակում են փորձարկել նոր մոտեցումներ: Մանկական զարգացման հիմնադրամը 2017թ. կազմակերպել է բարեգործական համերգ և տոմսերի ու բիզնեսների նվիրաբերած ապրանքների աճուրդով վաճառքից ստացված 8.8 մլն դրամ

2017թ. «Բարեգործության համաշխարհային ցուցանիշի» զեկույցում նշվում է, որ Հայաստանում հարցվողների 12 տոկոսը 2016 թվականին կատարել է բարեգործական նվիրաբերում, և այն աճել է 2015 թվականի 9 տոկոսից: Երիտասարդությունը և սկսնակ ՔՀԿ-ներն ավելի հաջողակ են իրենց աջակիցներից կամավորներ և ոչ ֆինանսական օգնություն ներգրավելու գործում, տեղական աջակիցները հազվադեպ են ֆինանսական աջակցություն ցուցաբերում: Խոշոր

(մոտ 18.500 ԱՄՆ դոլար) գումարով օգնել հատուկ կարիքներով երեխաներին մասնագիտական ծառայություններ մատուցելու գործին:

Պետական սուբսիդիաներ ստանալու համար ՔՀԿ-ները պետք է նախապես գրանցվեն պետական բյուջեում: 2017թ. շահույթ չհետապնդող դրամաշնորհների և սուբսիդավորումների համար բյուջետային գումարը կազմել է շուրջ 6.8 մլրդ դրամ (մոտ 14 մլն դոլար), 2016թ. 7.7 մլրդ դրամ (մոտ 16 մլն ԱՄՆ դոլար): Բացի այդ, կառավարությունը որոշ չափի ֆինանսավորում է տրամադրում նաև բյուջեի որոշակի տողերի շրջանակում: Քիչ գործակալություններ են այդ դրամաշնորհների բաշխման մեջ օգտագործում համեմատաբար թափանցիկ համակարգ: Օրինակ՝ երիտասարդական քաղաքականության շրջանակներում Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը հայտարարում է յուրաքանչյուր եռամսյակի փոքր դրամաշնորհների մրցույթ և հրապարակում ընտրության արդյունքները: Նախարարությունը պնդում էր, որ առցանց կիրառարակի նաև դրամաշնորհային ծրագրերի մասին զեկույցները, սակայն տարեվերջին դրանք դեռևս անհասանելի էին: Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմը պարզևատրում է Համահայկական երիտասարդական հիմնադրամի միջոցով. հիմնադրամը չի հրապարակում հաղթողների ամբողջական ցուցակը, սակայն տրամադրում է կոնկրետ ծրագրի գործունեության վերաբերյալ նորություններ: 2017 թ. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակել է սոցիալական ծառայությունների մրցակցային մրցանակների համար կանոնակարգերի նախագծեր, սակայն դրանք դեռևս անավարտ են: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը սկսեց նաև հայտարարել մրցույթներ՝ այլ կազմակերպությունների միջոցով լսողական խնդիրներ ունեցողների համար սարքերի բաշխման նպատակով: Որոշ տեղական ՔՀԿ-ներ ֆինանսավորում են ստանում տեղական կառավարման բյուջեներից, սակայն բացակայում է ֆինանսավորման ծավալի և ստացողների վերաբերյալ բավարար տեղեկատվությունը:

ՔՀԿ-ները ձգտում են առավելագույնս դիվերսիֆիկացնել իրենց ֆինանսավորման աղբյուրները, սակայն մեծապես մնում են կախված միջազգային դրամաշնորհներից: ՔՀԿ հիմնական դոնորների ցանկում ընդգրկված են ԱՄՆ դեսպանատունը, ԱՄՆ ՄԶԳ, ԵՄ, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը, ՄԱԿ-ի և Բաց հասարակության հիմնադրամները: ԵՄ-ից ՔՀԿ-ների ֆինանսավորումը 2017 թվականից շարունակում է աճել, այդ թվում՝ ՔՀԿ-ի կարողությունների զարգացման, բիզնեսի և սոցիալական ձեռներեցության զարգացման, երիտասարդական նախաձեռնությունների և հանրային քաղաքականության մասնակցության վրա հիմնված մի քանի խոշոր ծրագրերի միջոցով: ՔՀԿ-ների մի մասը նաև ուղղակի ֆինանսավորում է ստանում արտասահմանից, այդ թվում՝ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED), Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի (EED) և Գերմանական Մարշալ հիմնադրամի կողմից: 2017 թվականին ավելացել են տեղական կազմակերպությունների կողմից ենթադրամաշնորհային տրանսֆերտները:

Քիչ ՔՀԿ-ներ կան, հիմնականում մասնագիտական ասոցիացիաները, որոնք հավաքում են անդամավճարներ: Շատ հասարակական կազմակերպություններ եկամտի այս աղբյուրը գտնում են անբավարար՝ հատկապես հաշվի առնելով դրա հետ կապված փաստաթղթավորումը: Ոչ պաշտոնական խմբերն աջակցություն են ստանում իրենց աջակիցների և անդամների կողմից: Նորաստեղծ կազմակերպություններն ավելի հաճախ օգտագործում են առցանց խողովակներ և միջոցներ հավաքելու նորարարական գործիքներ: «Պահապան» զարգացման հիմնադրամը նախաձեռնել է «Ահա թե ինչու» քարոզարշավը, որի ընթացքում քաղաքային սրճարանների, բարերի և ռեստորանների հաճախորդները 200 դրամ բարեգործական տոմսի դիմաց (մոտ 40 ցենտ) հիմնադրամի պաստառի վրա ավելացնում են խճանկար-հանելուկի (puzzle) լուծման մի կտոր: Հավաքված գումարներն օգտագործվել են Ադրբեջանին սահմանակից Տավուշ մարզի գյուղերին և երեխաներին հրաձգությունից պաշտպանելու, դպրոցների տանիքները վերանորոգելու կամ ապաստարաններ կառուցելու նպատակով:

Օրենսդրության փոփոխությունները ՔՀԿ-ների շրջանում շահագրգռություն առաջացրին սոցիալական ձեռնարկության հայեցակարգի և վճարովի ծառայությունների մատուցման հանդեպ: Այնուամենայնիվ, շատ հասարակական կազմակերպություններ դեռևս վարանում են վճարովի ծառայություններ մատուցել հարկային օրենսդրության, բյուրոկրատական հաշվետվությունների ընթացակարգերի և շուկայի մասին սահմանափակ գիտելիքների վերաբերյալ տիրող անորոշության պատճառով: 2017 թվականին շատ դոնորական ծրագրեր կենտրոնացան սոցիալական ձեռնարկատիրության և սոցիալական ձեռնարկությունների մասով իրազեկվածության բարձրացման ու կարողությունների զարգացման վրա: 2017 թվականին ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Համայնքների զարգացում սոցիալական ձեռներեցության զարգացման միջոցով» (CODE-SE) ծրագրի շրջանակում ՔՀԿ-ները և համայնքային խմբերը Հայաստանի յոթ մարզերում ստեղծեցին տասը սոցիալական ձեռնարկություններ: «Մարերի Բարիք» անունով սոցիալական ձեռնարկությունում, որը Վարդենիկ գյուղում հիմնադրել է «Վիրտուալ զարկերակ» /«Վիրտուալ պուլս»/ ՀԿ-ն, յոթանասուն ընտանիք զբաղվում է բանջարեղենի և դեղաբույսերի հավաքման ու փաթեթավորման գործով: ՀԿ-ն իր արտադրանքի համար գտել է շուկա:

Գրանցված ՔՀԿ-ները հիմնականում ունեն ֆինանսական կառավարման համակարգեր, քանի որ դոնոր կազմակերպությունները և հարկային մարմիններն ուշադիր հետևում են նրանց ֆինանսական փաստաթղթերին: ՔՀԿ-ները ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են օրենքի կամ դոնորների պահանջներով, թեև նրանցից շատերը չունեն համապատասխան ներքին քաղաքականություն և ընթացակարգեր: <<Հասարակական կազմակերպությունների մասին>> օրենքի համաձայն՝ պետական բյուջեից ֆինանսավորվող հասարակական կազմակերպությունները պետք է 2017 թվականի տարեկան հաշվետվությունները հրապարակելին մինչև 2018-ի մայիս ամիսը: <<Հիմնադրամների մասին>> օրենքի համաձայն՝ 2003 թվականից բոլոր հիմնադրամներից պահանջվում է տրամադրել

տարեկան ֆինանսական հաշվետվություններ: Քիչ կազմակերպություններ են ընդունում ֆինանսական աուդիտի կարևորությունը: Սովորաբար ՔՀԿ-ներն արտաքին աուդիտ անցկացնում են միայն այն դեպքում, երբ այն պահանջվում է օրենքով կամ դոնորների կողմից:

## ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ 3.0

2017 թվականին ՔՀԿ-ի շահերի պաշտպանությունը բարելավվեց ինստիտուցիոնալ հարթակների ներդրման և մասնակցության հնարավորությունների օգտագործման շնորհիվ: «Իրավական ակտերի մասին» օրենքը սահմանում է, որ գործադիր մարմինները պետք է նպաստեն հանրային քննարկումներին՝ առնվազն իրենց կայքերում օրենքների նախագծերը հրապարակային տեղադրելու միջոցով: ՔՀԿ-ները կարող են տեղեկանալ նոր իրավական նախագծերի մասին և արձագանքների տող տրամադրել նաև e-draft.am օնլայն ինտերակտիվ հարթակի միջոցով, որը ներկայացնում է պետական մարմինների կողմից մշակված օրենքների նախագծերը: Այս պլատֆորմը գործում է 2017 թվականի սկզբից: Տարվա ընթացքում այն հանրաճանաչ է դարձել իր ձեռք բերած այցելությունների քանակով, որոնք սեպտեմբերի մոտ 29,000-ից դեկտեմբերին հասել են մոտ 105,000-ի: Կառավարության որոշումներից հետո բոլոր տասնութ նախարարությունները 2016 թվականին հիմնել են հասարակական խորհուրդներ, որոնք ներառում են ՔՀԿ-ներին: Այդ հասարակական խորհուրդների մի մասն արդյունավետ աշխատել է 2017-ին՝ ՔՀԿ-ներին տրամադրելով իրենց շահառուներին ներկայացնելու և հանրային քաղաքականություն ձևավորելու հնարավորություններ: Օրինակ՝ ՔՀԿ-ները ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ ակտիվորեն համագործակցում են երեխաների իրավունքների, հաշմանդամության և պետական սոցիալական ծառայությունների հետ կապված լայնամասշտաբ սոցիալական բարեփոխումների շրջանակներում: Մինևս ժամանակ, ՔՀԿ-ները նշում են, որ պետական մարմինները միշտ չէ, որ արձագանքում են իրենց առաջարկներին, և որոշ օրենսդրական նախաձեռնություններ իրականացվում են հապշտապ, առանց համապատասխան հանրային քննարկման: Բացի այդ, քիչ կազմակերպություններ ունեն մասնագիտական փորձառություն, ինչը նրանց թույլ կտար պատրաստել գործարար և արդյունավետ առաջարկներ:

2017 թվականին ՔՀԿ-ների մասնակցությունն օրենսդրական գործընթացին հիմնականում տեղի է ունեցել գործադիր մարմինների հետ երկխոսության շրջանակներում օրենսդրական նախագծերը մինչև խորհրդարան ներկայացնելը: Խորհրդարանի աշխատանքներում ներգրավվածությունն ավելի պասիվ էր, մասնավորապես՝ հանրային լուսման սղության պատճառով, քանի որ 2017թ. մայիսին Ազգային ժողովն ընդունեց ընթացակարգի նոր կանոններ, որով խորհրդարանական հանձնաժողովների կողմից իրականացվող հրապարակային լուսմանը պարտադիր փոխարեն դարձան կամավոր:

Հոկտեմբերին ընտանեկան բռնության մասին օրինագծի վերաբերյալ ՔՀԿ-ների մասնակցությամբ կազմակերպվել էին խորհրդարանական լսումներ, ինչը հանգեցրեց հանրային թեժ քննարկումների: Ընտանեկան բռնության մասին օրենքը մի քանի տարի կառավարության օրակարգում էր, մասնավորապես՝ կանանց իրավունքների պաշտպանության կազմակերպությունների և «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի շարունակական ջանքերի շնորհիվ: Այնուամենայնիվ, մի քանի ՔՀԿ-ներ և ազգայնական խմբեր այդ օրենքն սպառնալիք էին համարում ավանդական հայկական ընտանիքի արժեհամակարգի համար: Ընտանեկան բռնության և կանանց իրավունքների ոլորտում աշխատող ՔՀԿ-ներն օրենքի բազմաթիվ դրույթներ նույնպես համարում էին խնդրահարույց: Արագացող լարվածության և աճող ընդդիմության պայմաններում 2017թ. դեկտեմբերին խորհրդարանն ընդունեց այդ օրենքը:

Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդում ՔՀԿ-ների ներկայացուցչությունը մեծացնելու մասին կառավարության 2016թ. որոշումից հետո խորհրդում ավելացվեցին երեք ՔՀԿ-ներ: Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն (Ա&ԹՆ) բազմակողմ շահառուների խումբը և Բաց կառավարման գործընկերություն (ԲԿԳ) աշխատանքային խմբերը միջազգային այդ նախաձեռնությունների շրջանակներում շարունակում են ծառայել որպես շահագրգիռ կողմերի բազմախոսության հարթակներ:


Հայաստանի 2017թ. տարածքային վարչարարության բարեփոխումները շարունակեցին միավորել փոքր և ֆինանսապես խոցելի համայնքները, որոնք հայտնի են որպես կլաստերներ: Տարածքային կառավարման և զարգացման նախարարության առաջարկի վերլուծության հիման վրա <<Համայնքների ֆինանսիստների միավորումը>> (ՀՖՄ) ներկայացրեց առաջարկներ՝ համախմբված կլաստերների նախագծման բարելավման վերաբերյալ: Արդյունքում երեսունչորս ամենախնդրահարույց կլաստերներից չորսը վերակազմավորվեցին:

ՔՀԿ-ները լրացուցիչ քայլեր են ձեռնարկում իրենց տեղական մակարդակի շահերի պաշտպանության բարելավման ուղղությամբ: «Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոնի կողմից կոմունալ ծառայությունների մոնիթորինգի արդյունքում Գյումրիի քաղաքապետարանը քայլեր է ձեռնարկել աղբահանության, փողոցային լուսավորության բարելավման և հաջորդ տարիների բյուջեում այդ նպատակով նախատեսված միջոցներ հատկացնելու համար:

2017թ. ՔՀԿ-ները երկխոսության մեջ են մտել ՊԵԿ-ի հետ՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունների վերահսկողության նորաստեղծ վարչության կանոնակարգման բարելավման նպատակով: Բացի այդ՝ ՔՀԿ-ների մի խումբ համախմբվեց հարկային նորմատիվների փոփոխման նախաձեռնության շուրջ, որպեսզի ՔՀԿ-ները նույնպես կարողանան օգտվել շրջանառության հարկի տարբերակներից, ինչպես բիզնեսները:

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ՝ 3.8

2017թ.-ին ՔՀԿ-ների կողմից մատուցվող ծառայությունների որակը և ծավալն



ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Էականորեն չեն փոխվել: ՔՀԿ-ները շարունակում են տրամադրել մի շարք ծառայություններ, որոնցից շատերը վերաբերում են սոցիալական, կրթական, մարդու իրավունքների պաշտպանության, բնապահպանական և հաշմանդամության ինդիկներին: Մի շարք կազմակերպություններ ոչ ֆորմալ և գրանցված ՔՀԿ-ներին սկսեցին առաջարկել կարողությունների զարգացման ծառայություններ՝ այս ոլորտում պահանջարկի աճը


բավարարելու նպատակով:

ՔՀԿ-ներն ավելի շատ են ընդունում կարիքների համապարփակ գնահատումների կարևորությունը՝ համայնքների կարիքներին ավելի զգայուն կերպով անդրադառնալու առումով: Ավելի շատ ՔՀԿ-ներ շահառուներին ակտիվորեն են ներգրավում իրենց գործունեության մեջ՝ մասամբ ի պատասխան դոնորի պահանջներին: USAID-ի կողմից ֆինանսավորվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում ԹԻՀԿ-ից ենթադրամաշնորհ ստացած 10 ՔՀԿ-ներ օգտվել են մասնակցային մոնիթորինգի գործիքներից՝ իրենց շահառուներին ներգրավելով հանրային ծառայությունների մոնիթորինգի մեջ: Մի քանի ՔՀԿ-ներ իրականացնում են մասնագիտական մոնիթորինգ և հետազոտություններ: Այդ արդյունքները նրանք տրամադրում են այլ ՔՀԿ-ների, կառավարությանը և դոնորներին: Կառավարության պատասխանատուները ճանաչում են մոնիթորինգի արդյունքները, ինչը նաև գրավում է լրատվամիջոցների ուշադրությունը: Օրինակ՝ «ԼոգոՍ» իրավապաշտպան կազմակերպությունն ուսումնասիրել է բժշկական, սոցիալական, փորձագիտական հանձնաժողովների կողմից մատուցվող ծառայությունների որակը և թափանցիկությունը. հետազոտության արդյունքները քննարկվել են հակակոռուպցիոն խորհրդի նիստում, որտեղ վարչապետը համապատասխան հանձնարարականներ է տվել պատասխանատու մարմիններին:

Թեև ներկայումս հասարակական կազմակերպություններին թույլատրվում է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, սակայն սակավաթիվ ՔՀԿ-ներ են մատուցում վճարովի ծառայություններ՝ իրենց սահմանափակ կարողությունների և շահառուների սահմանափակ վճարունակության պատճառով:

Կենտրոնական և խոշոր քաղաքներում տեղական կառավարությունները կարևորում են ծառայությունների մատուցման գործում ՔՀԿ-ների դերը: 2017թ. ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը 60 մլն դրամ (մոտ 125.000 ԱՄՆ դոլար) տրամադրեց «Նոր սերնդի դպրոց» ՔՀԿ-ին՝ արդյունավետ կառավարման և ուսանողների արդյունքների մոնիտորինգի առցանց հարթակ «Դասարան» կրթական ծրագրի իրականացմանն աջակցելու համար: Այս հարթակը Հայաստանում ունի մոտ մեկ միլիոն գրանցված օգտատեր և ներառում է հանրապետության բոլոր հանրակրթական դպրոցները:

## ՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ՝ 3.1



ՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԳՆԱՏՍԱՆՈՒՄ

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում Հայաստանի իրավաբանների ասոցացիան հայաստանյան ՔՀԿ-ներին առաջարկել է իրավական օգնություն, ուսուցում և խորհրդատվություն: Դրանք կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող աջակցության ծրագրերից բացի՝ ԾՄԿ-ներն ու ռեսուրս կենտրոնները եկամուտ են ստանում ՔՀԿ-ներին վճարովի ծառայություններ առաջարկելով, քանի որ ՔՀԿ-ները գնալով ավելի շատ են ճանաչում կարողությունների զարգացման արժեքը և միջոցներ են հատկացնում սեփական զարգացման համար:

Այս ոլորտի աջակցման ենթակառուցվածքը 2017 թվականին բարելավվել է: Միջազգային դոնորների, ISO-ների և ռեսուրսային կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են՝ ԵՀՀ-ն, ՀԿ Կենտրոնը, Գործընկերություն և ուսուցում ՀԿ-ն, ԹԻՀԿ-ը և Ինֆոտները, իրականացվող ՔՀԿ զարգացման ծրագրերից օգտվել են Հայաստանի զգալի թվով ՔՀԿ-ներ: ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող

Դոնորների կողմից իրականացված ծրագրերով 2017թ. ընթացքում ավելի շատ տեղական դրամաշնորհներ են տրամադրվել: ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող ԾՄԿ ՔՀԶ ծրագրի շրջանակներում ՀԿ կենտրոնը և «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ն տասներեք ՔՀԿ-ների տրամադրել են ենթադրամաշնորհներ՝ ինստիտուցիոնալ զարգացման և միջոլորտային համագործակցության զարգացման համար: ԹԻՀԿ-ն շարունակում է դրամաշնորհներ տրամադրել ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «Պահանջատեր հասարակություն հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում հանրային ծառայությունների մասնակցային մոնիթորինգի համար: ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների



հզորացմանը»>> (STRONG CSOs for Stronger Armenia) նախագիծը, որը ղեկավարում են Լեհաստանի Պոդլասկա շրջանային զարգացման հիմնադրամը և <<ԴԱՍ.ԱՍ>> ՀԿ-ն, ՔՀԿ-ներին տրամադրել են քառասունվեց ենթադրամաշնորհներ, որոնք գործընկերություն են կազմել սոցիալական, մշակութային, կրթական և այլ ոլորտներում ծրագրեր իրականացնելու նպատակով: ԱՄՆ ՄՁԳ կողմից ֆինանսավորվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀաՄաՏեղ) ծրագրի շրջանակում, որը կառավարվում է հայաստանյան վեց ՔՀԿ-ների կոնսորցիումի կողմից, ՀՖՄ-ի ղեկավարմամբ, տասը դրամաշնորհներ են տրամադրվել տարածաշրջանային ՔՀԿ-ների՝ տեղական ինքնակառավարման մարմիններում իրենց մասնակցությունը բարելավելու նպատակով: Շնորհվել են նաև երեսուներեք դրամաշնորհներ Երիտասարդական բանկեր նախաձեռնող խմբերին:

Կարողությունների զարգացմանը և միջոլորտային համագործակցությանը նվիրված ծրագրերի շրջանակներում կազմակերպված դասընթացների և միջոցառումների ընթացքում ՔՀԿ-ները միմյանցից սովորելու, փորձի փոխանակման և համատեղ նախագծերի իրականացման հնարավորություն են ստացել: Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության դպրոցը գործունեություն է ծավալել՝ տրամադրելով ոչ միայն կազմակերպական զարգացման դասընթացներ և խորհրդատվություններ, այլև տարբեր մարզերից ՔՀԿ-ների համար կազմակերպվել են ուսուցողական այցելություններ: ԱՄՆ ՄՁԳ-ի կողմից ֆինանսավորվող և ԵՀՀ -ի կողմից իրականացվող ՔՀԿ պորտալի (ԴեՊո) կողմից շարունակվել են ՔՀԿ-ների վերաբերյալ նորությունների և հնարավորությունների մասին տեղեկատվական հրապարակումները: Ռեսուրսներ են տրամադրվել նաև ՔՀԿ-ներին: 2017 թվականին պորտալն ունեցել է գրեթե 3 000 ակտիվ ամսական օգտատեր:


ՔՀԿ-ները ձևավորում են կոալիցիաներ ընդհանուր նպատակների շուրջ՝ ինչպես դոնորական ֆինանսավորմամբ, այնպես էլ այլ ծրագրերի ընդգրկմամբ: «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությունը, որը 2013 թվականից ձևավորված ՔՀԿ կոալիցիա է, 2017թ. խորհրդարանական ընտրությունների դիտարկման համար միավորել է տասը ՔՀԿ-ներ և 4,437 դիտորդներ: Այս նախաձեռնությանը հաջողվեց ընտրություններին հետևելու համար ներգրավել 147 սփյուռքահայերի, այդ թվում նաև հանրահայտ մարդկանց: Տասը կազմակերպություններ, այդ թվում նաև երեխաների պաշտպանության գործում ակտիվ ՔՀԿ-ներ, կառավարության օրակարգ են ներկայացրել <<Վերջ երեխաների նկատմամբ բռնությանը>> արշավի (EVAC) հարցերը: 2017թ. այլ ակտիվ ցանցերում ընդգրկված էին «Պրոբացիոն ցանց»-ը, Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմը, «Գյուղատնտեսական դաշինքը» և «Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության» կոալիցիան: ՔՀԿ-ների քարտեզագրման հաշվետվությունը, որը մշակվել է 2017թ. «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում, կարևորել է ՔՀԿ կոալիցիաների առջև ծառայած մի շարք մարտահրավերներ՝ ներառյալ ռազմավարական տեսլականի բացա-

կայությունը, համակարգման և կառավարման, ֆինանսական խնդիրները և շահերի պաշտպանության զարգացման ու հանրային քաղաքականության որակյալ փաստաթղթերի նախագծման սահմանափակ կարողությունները:

Վերապատրաստման և տեխնիկական աջակցության լայն հնարավորություն է եղել 2017 թվականին՝ ընդգրկելով ընդհանուր կազմակերպական կառավարումից մինչև կոնկրետ թեմատիկ հարցերը: Տարածաշրջանային ՔՀԿ-ները գտնվել են մի քանի վերապատրաստման ծրագրերի ուշադրության կենտրոնում: Strong CSOs for Stronger Armenia ծրագրի շրջանակներում 150-ից ավելի ՔՀԿ-ներ մասնակցել են 14 վերապատրաստման, 293 թրեյնինգային դասընթացների, ինչպես նաև կազմակերպական կառավարման, նախագծերի կառավարման, դրամահավաքի և սոցիալական ձեռներեցության վերաբերյալ 20 անվճար խորհրդատվությունների: Կարողությունների զարգացման նյութերը՝ նախագծի հայերեն և անգլերեն լեզուներով, հասանելի են եղել [www.civilsociety.am](http://www.civilsociety.am) կայքում: «ՀԿ կենտրոնը» և «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ն ՄԱԿ ՔՀԶ ծրագրի շրջանակներում տրամադրել են ավելի քան 1000 դասընթացներ՝ ՔՀԿ ավելի քան 1000 ներկայացուցիչների համար: «ՔՀ Կամուրջը», անվճար խորհրդատուների ղեկավարմամբ, հայաստանյան ՔՀԿ-ների կարողությունների ամրապնդման համար կազմակերպել էր պրոֆեսիոնալ թեմատիկ դասընթացներ և հանրային տարբեր միջոցառումներ՝ ուղղված քաղաքացիների կարիքների բավարարմանը: Միջազգային կազմակերպությունների և սփյուռքի նախաձեռնած մի շարք հարթակներ, ինչպիսիք են ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի «Կուլթա լաբ»-ը և «Իմփաթթ Հաբ Երևան»-ը (Impact Hub Yerevan), նպաստել են սոցիալական ձեռնարկատիրության զարգացմանը. տրամադրվել է խորհրդատվություն, կազմակերպվել են կրթական միջոցառումներ, ինչպես նաև գրասենյակային տարածք է տրամադրվել հասարակական կազմակերպությունների ձեռնարկումներին: ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող ՀԿ ԴեՊո նախագիծը 2016-2017թթ. համագործակցել է ավելի քան 300 ՔՀԿ-ների հետ՝ դրամահավաքի և ռեսուրսների հավաքագրման, ՔՀԿ կառավարման դպրոցների, կազմակերպչական ենթակառուցվածքների և կայունության թեմաներով: Բացի այդ՝ ԵՀՀ-ն և նրա գործընկերները ՔՀԿ համակարգերն ու կառույցները վերանայելու հարցերով իրականացրել են ավելի քան 60 հարցումներ, տրամադրել խորացված խորհրդատվություններ՝ քաղաքականության, ընթացակարգերի, հաղորդակցման համակարգերի և ֆինանսական կայունության վերաբերյալ:

ՔՀԿ-ներն ավելի ու ավելի շատ են համագործակցում կառավարության և ԶԼՄ-ների հետ, մինչդեռ մասնավոր հատվածի հետ համագործակցությունը դեռևս սկզբնական մակարդակի վրա է: 2017թ. «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն»-ը շարունակել է ՔՀԿ-ների համար լրագրական գրագիտության ուսուցումը, ինչը նպաստել է տարածաշրջանային ՔՀԿ-ների և լրագրողների հաղորդակցության բարելավմանը, ինչպես նաև իրենց համայնքներում խնդիրների վերաբերյալ ծրագրերի և ֆիլմերի համատեղ ստեղծմանը:

## ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄ: 3.9



ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄ ՎԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2017 թվականին ՔՀԿ-ներն օգտվել են հանրային գիտակցության բարելավված կարծրատիպերից, սակայն դարձել են նաև թիրախ լայն տարածում գտած բացասական հրապարակումների համար:

Բազմաթիվ առցանց լրատվամիջոցների միջոցով ՔՀԿ-ները 2017-ին ավելի շատ հնարավորություններ են ունեցել ներկայացնելու իրենց գործունեությունը և միջոցառումները: ՔՀԿ-ների ներկայացուցիչները հաճախ

հրավիրվել են մասնակցելու հեռուստատեսային քննարկումների և թոք-շոունների: Ե՛վ հեռուստատեսությունը, և՛ առցանց լրատվամիջոցներն ավելի շատ են ընդունել ՔՀԿ-ների դերը և վերջիններիս առաջարկած փորձը: «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի» օժանդակությամբ «Հողված 3» ակումբը (կառավարվում է «Հանուն հավասար իրավունքների» ՀԿ-ի կողմից) և «Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը» (կառավարվում է «Հանրային լրագրության ակումբի» կողմից) ՔՀԿ-ներին տրամադրում են տարածք՝ լրատվամիջոցների ներկայությամբ միջոցառումներ և քննարկումներ կազմակերպելու, ինչպես նաև ուղիղ եթերի հեռարձակման համար:

2017 թվականին իրականացվել են մամուլի մի շարք բացասական հրապարակումներ, մասնավորապես՝ իշխանամետ լրատվամիջոցներում, որոնք ՔՀԿ-ներին մեղադրել են դոնորական օրակարգին հետևելու և հայկական ավանդական արժեհամակարգին հակասելու համար: Քարոզարշավներում, մասնավորապես՝ խորհրդարանի անդամների կողմից, ատելության խոսքով հատկապես թիրախավորվել են այն ՔՀԿ-ները, որոնք զբաղվում են հայ հասարակության համար զգայուն և ցավոտ հարցերով, այդ թվում՝ ընտանեկան բռնության, բանակում կոռուպցիայի և սեռական փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող խնդիրներով: Օրինակ՝ ընտանեկան բռնության մասին օրինագծի շուրջ քննարկումներն ակտիվ քննադատության են ենթարկվել, մասնավորապես՝ ռուսական կամ պրոռուսական շահերով ՔՀԿ-ների, մասնավոր հեռուստաընկերությունների և թերթերի կողմից: Հատկանշական է, որ «Միջազգային հումանիտար զարգացման» ՀԿ-ն (որի առաքելությունը հասանելի չէ համացանցում, և հայտնի չեն նաև ֆինանսավորման աղբյուրները), որպեսզի կարողանա ավելի շատ դրամաշնորհ հայթայթել, կանանց իրավունքների պաշտպանության կազմակերպություններին մեղադրել է ընտանեկան բռնության բարձր տեմպի պահպանման մասով հետաքրքրություն ցուցադրելու համար: 2017թ. գարնանը Եվրամիության կողմից ֆինանսավորվող դրամաշնորհների հետ կապված կոռուպցիոն

սկանդալը հանգեցրեց ԵՄ-Հայաստան պատվիրակության անձնակազմի ձերբակալմանը և յուղ ավելացրեց ՔՀԿ-ների կողմից դրամաշնորհների չարաշահման մասին լայնորեն տարածված լուրերին:

Համաձայն «Կովկասյան բարոմետր»-ի ուսումնասիրությանը, որն իրականացվել է 2017թ. հոկտեմբերին «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի» կողմից, հարցվածների 5 տոկոսը լիովին վստահում է ՔՀԿ-ներին, ինչը փոքր-ինչ ավել է 2015թ. երեք տոկոսի համեմատությամբ: 19 տոկոսը որոշակիորեն վստահում է ՔՀԿ-ներին (նույնը, ինչպես 2015-ին): Իսկ նրանք, ովքեր լիովին չեն վստահում ՔՀԿ-ներին, 2015թ. 29 տոկոսից վերաճել և կազմում են 31 տոկոս: Այս բացասական վերաբերմունքն արտացոլում է հասարակության մեջ վստահության ցածր մակարդակը: Ընդհանուր առմամբ մարդիկ սովորաբար առավել դրական վերաբերմունք ունեն այն կազմակերպությունների նկատմամբ, որոնց ճանաչում են անձամբ:

Կենտրոնական և տեղական կառավարման մարմինները պատրաստակամություն են դրսևորում համագործակցելու ՔՀԿ-ների հետ: Պետական մարմինները հաճախ դիտարկում են մոնիթորինգների հաշվետվությունները և հրապարակումների արդյունքները, որոշակի ոլորտներում մասնագիտացված ՔՀԿ-ների անդամներին հաճախակի հրավիրում պետական համապատասխան ռազմավարությունների և օրենսդրությային նախագծերի քննարկումներին: Սակայն բիզնեսները պահպանում են ՔՀԿ-ների դերի վերաբերյալ իրենց սահմանափակ ընկալումը, և քչերն են հենվում ՔՀԿ-ների փորձի և աջակցության վրա:

ՔՀԿ-ների մոտ սովորաբար բացակայում են PR հմտությունները, չնայած այս ոլորտում աճող ջանքեր են գործադրվում: Քիչ կազմակերպություններ են խթանում իրենց տեսանելիությունը և Facebook-ով տարածում տեղեկատվություն: Մի քանի զարգացած ՔՀԿ-ներ առցանց հրապարակել են ամենամյա հաշվետվություններ կամ ֆինանսական տեղեկատվություն, իսկ հիմնադրամներն իրենց տարեկան հաշվետվությունները հրապարակում են պետական կառավարման կայքերում՝ օրենքով սահմանված կարգով: ՔՀԿ-ների համար սահմանված չեն ոլորտային էթիկայի կանոններ, թեև որոշ զարգացած ՔՀԿ-ներ կայքերում հրապարակում են նաև իրենց վարքագծի կանոնները:

**Օսնուցում.** Այս զեկույցում ներկայացված են քննարկումների մասնակիցների և նախագծի փորձագետների կարծիքները, եւ պարտադիր չէ, որ դրանք արտացոլեն USAID-ի կամ FHI 360-ի տեսակետները: